ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «11» 07 2019թ № 537-Հ

ԱՆԻ ՕԲՈՍՅԱՆԻՆ «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 704 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ և 15-րդ հոդվածի 1-ին մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետը, 26-րդ և 28-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. Անի Սուրենի Օբոսյանին 2019 թվականի հուլիսի 12-ից նշանակել «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքի վերացումը և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի օգոստոսի 27-ի «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները Աննա Մելքոնյանի վրա դնելու մասին» N 704-Ա հրամանը:

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ